ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Հայաստանի Հանրապետություն, Երևան, 0009, Կորյուն 15, հեռ. (37412) 77 77 40, info@cpcarmenia.am

Koryun Street 15, 0009, Yerevan, Republic of Armenia, tel. (37412) 77 77 40, info@cpcarmenia.am

ՈՐՈՇՈՒՄ N 2024/1

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՈՒԴԻՏԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«15» մարտի 2024 թվական քաղաք Երևան

Աուդիտորական կազմակերպությունների ընտրության համար անցկացվող մրցույթների կազմակերպման և անցկացման մրցութային հանձնաժողովը, կազմով Լիլիթ Ալեքսանյանի, Տիգրան Ծատուրյանի և Լիլիթ Հարությունյանի (այսուհետ՝ Մրցութային հանձնաժողով), ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 40.2-րդ հոդվածով, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի «Աուդիտորական կազմակերպությունների ընտրության կարգը և նրանց ներկայացվող պահանջները սահմանելու մասին» 2022 թվականի հունիսի 17-ի N 02-Ն որոշման Հավելվածի 11-րդ կետով, ***որոշեց.***

1. հաստատել կուսակցությունների 2023 թվականի տարեկան հաշվետվությունների աուդիտի կազմակերպման նպատակով աուդիտորական կազմակերպությունների ընտրության բաց մրցույթի մասին հայտարարությունը՝ համաձայն Հավելվածի:

Մրցութային հանձնաժողովի նախագահ՝ Լիլիթ Ալեքսանյան

Հավելված

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՈՒԴԻՏԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ
ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ

Սույն Հայտարարությունը հաստատված է Մրցութային հանձնաժողովի «2024/1» որոշմամբ

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) հայտարարում է բաց մրցույթ (այսուհետ՝ Մրցույթ)՝

1. «Վերածնվող Հայաստան» կուսակցության,
2. «Հայ յեղափոխական դաշնակցություն» կուսակցության,
3. «Բարգավաճ Հայաստան» կուսակցության,
4. «Հանրապետություն» կուսակցության,
5. «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության,
6. «Ապրելու երկիր» կուսակցության,
7. «Հայաստանի հանրապետական» կուսակցության,
8. «Հայրենիք» կուսակցության,

2023 թվականի տարեկան հաշվետվությունների պարտադիր աուդիտի իրականացման համար աուդիտորական կազմակերպությունների ընտրության նպատակով:

Մրցույթի իրականացման կարգը և պայմանները սահմանվում են «Աուդիտորական կազմակերպությունների ընտրության կարգը և նրանց ներկայացվող պահանջները սահմանելու մասին» Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի 2022 թվականի հունիսի 17-ի N 02-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) Հավելվածով:

Մրցույթին մասնակցելու համար աուդիտորական կազմակերպություններին ներկայացվող պահանջները սահմանվում են Որոշման Հավելվածի Գլուխ 3-ով:

Մրցույթին մասնակցելու սահմանափակումները սահմանվում են Որոշման Հավելվածի Գլուխ 4-ով:

Մրցութային առաջարկների պատրաստման և ներկայացման կարգը, ներկայացման ժամկետը, ներկայացվող փաստաթղթերի ցանկը սահմանվում են Որոշման Հավելվածի Գլուխ 6-ով:

Մրցույթին մասնակցելու համար դիմումի ձևը սահմանվում է Որոշման Հավելվածի Ձև 2-ով:

Մրցույթի տեխնիկական առաջարկի ձևը սահմանվում է Որոշման Հավելվածի Ձև 3-ով:

Կուսակցությունների տարեկան հաշվետվությունների աուդիտի իրականացման շրջանակները սահմանվում են Որոշման Հավելվածի Գլուխ 10-ով:

Մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցին կառաջարկվի կնքել աուդիտորական ծառայությունների մատուցման պայմանագիր: Աուդիտորական ծառայությունների մատուցման պայմանագրերի արժեքները կազմում են՝

N	**Մրցույթի ծածկագիր**	**Կուսակցության անվանում**	**Պայմանագրի արժեք (ՀՀ դրամ)**
1	ԿՏՀԲՄԾ-2024/1	«Վերածնվող Հայաստան» կուսակցություն	1,500,000
2	ԿՏՀԲՄԾ-2025/2	«Հայ յեղափոխական դաշնակցություն» կուսակցություն	3,450,000
3	ԿՏՀԲՄԾ-2024/3	«Բարգավաճ Հայաստան» կուսակցություն	1,800,000
4	ԿՏՀԲՄԾ-2024/4	«Հանրապետություն» կուսակցություն	1,560,000
5	ԿՏՀԲՄԾ-2024/5	«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն	7,200,000
6	ԿՏՀԲՄԾ-2024/6	«Ապրելու երկիր» կուսակցություն	3,000,000
7	ԿՏՀԲՄԾ-2024/7	«Հայաստանի հանրապետական» կուսակցություն	4,200,000
8	ԿՏՀԲՄԾ-2024/8	«Հայրենիք» կուսակցություն	1,800,000

Աուդիտորական ծառայությունների մատուցման պայմանագրի օրինակելի ձևը սահմանվում է Որոշման Հավելվածի Ձև 5-ով:

Սույն հայտարարությունը կազմվել է «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքի 28-րդ հոդվածի, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին»

օրենքի 40.2-րդ հոդվածի, Որոշման և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

Մրցույթի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը: Մրցույթի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

Մրցութային առաջարկներն անհրաժեշտ է ներկայացնել ***ՀՀ, Երևան, Կորյունի փողոց 15*** հասցեով, թղթային ձևով, մինչև սույն հայտարարության հրապարակման օրվանից հաշված 14-րդ օրը՝ ***2024 թվականի մարտի 29-ը ներառյալ՝ ժամը 11:00-ն:***

Մրցութային առաջարկները ներկայացվում են հայերենով:

Մրցութային առաջարկների բացումը տեղի կունենա ***ՀՀ, Երևան, Կորյունի փողոց 15*** հասցեում, 2024 թվականի մարտի 29-ին՝ ժամը 11:00 -ին:

Աուդիտորական ծառայությունները պետք է մատուցվեն, իսկ աուդիտորական եզրակացությունները պետք է ներկայացվեն աուդիտորական ծառայությունների մատուցման պայմանագրերի կնքումից հետո՝ 45-օրյա ժամկետում: